



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ԽՕՍՔԸ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ԽՕՍՔԸ  
ԹՈՐՈՆԹՈՅԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ԵՐԵՍՈՒՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ

Մեզի համար հոգեկան զոհունակութիւն կը պատճառէ այն իրողութիւնը՝ որ երեք տասնամեակներ թորոնթոյի Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցին եղած է գլխաւոր կեդրոնը համայնքի հոգեւոր եւ ազգային կեանքին: Տիրոջ շնորհներով օժտուած եւ ազգային գիտակցութեան տէր հոգեւոր եւ աշխարհական պատասխանատու անձերու կատարած գնահատելի աշխատանքին եւ յանձն առած զոհողութեանց շնորհիւ Թորոնթոյի մէջ հետզհետէ աճած ու բարգաւաճած մեր համայնքի եկեղեցական, ազգային, կրթական եւ ընկերային կարիքները լաւագոյնս հոգատարուած են:

Եւ այսօր, համայնքը ինքզինք պատրաստ կը զգայ մշակելու եւ իրականութեան վերածելու նոր եւ օգտակար ծրագրումներ՝ Տիրոջ փառքին եւ մեր ժողովուրդի բարօրութեան համար:

Որպէս Առաջնորդ Ամերիկայի եւ Գանատայի Հայոց, հոգեկան ուրախութեամբ կ'ողջունենք Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ 30-ամեակը, կը գնահատենք համայնքի արձանագրած յաջողութիւնները եւ կը մաղթենք որ յաջողութեամբ պսակուին նոր ու բարի ծրագրումները: Կ'աղօթենք որ Տէրը իր հովանիին ներքեւ պահէ Հայաստանեայց Եկեղեցին, ինչպէս նաեւ Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը, ծխական խորհուրդի եւ եկեղեցական կազմակերպութեանց անդամները եւ համայնքի բոլոր հաւատացեալները:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

նոյեմբեր 3, 1983  
նիւ Եորք, ն.Ե.